ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ info@prosecutor.am

N 12/12/7656-17

«11» 09 2017թ.

Արմեն Գալստյանին
armen_galstyan1958@mail.ru

2017 թվականի օգոստոսի 27-ին՝ ժամը 23:02-ին, ՀՀ դատախազության info@prosecutor.am էլեկտրոնային փոստին Ձեր անունից ստացված դիմումի կապակցությամբ հայտնում եմ, որ 2017թ. օգոստոսի 1-ին «Hetq.am» կայքում զետեղված «գնդապետի պնդմամբ՝ ՀՀ ՔԿ քննիչները շանտաժի են ենթարկել և անհիմն մեղադրանք առաջադրել» վերտառությամբ հրապարակման կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում կատարվել է նախնական ուսումնասիրություն, որի արդյունքում ձեռք բերված նյութերն ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Վերոգրյալի կապակցությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նյութերի նախապատրաստման ընթացքում Ձեր կողմից հաղորդում է ներկայացվել այն մասին, որ 2014թ. սեպտեմբերի 10-ին Ձեր և Կարեն Հովհաննիսյանի առերես հարցաքննությունից անմիջապես հետո ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության քննիչ Արա Մկրտչյանն ու նրա պետ Ամբակում Գրիգորյանը Ձեր փաստաբան Հրանտ Ավետյանին դուրս են հրավիրել աշխատասենյակից, որից հետո Ամբակում Գրիգորյանը հայհոյանքներով պահանջել է դրանից մոտ 1 ամիս առաջ վաճառված հայրական տան գումարի՝ 70.000 ԱՄՆ դոլարի չափով կաշառք՝ սպառնալով՝ հակառակ դեպքում կալանավորել Ձեր որդուն: 2014թ. սեպտեմբերի 12-ին Դուք պահանջված 70.000 ԱՄՆ դոլարը տարել և Արա Մկրտչյանի բնակարանում տվել եք նրան: Դրանից հետո մոտ 1 տարի 3 ամիս Ձեզ չեն հրավիրել քննչական բաժին և քննչական գործողություններ չեն կատարել: Բուժման նպատակով ԱՄՆ մեկնելու համար 2015թ. դեկտեմբերի կեսերին «Զարգացման Հայկական բանկում» գրավադրել եք Ձեր դստեր բնակարանը, վերցրել 35.000 ԱՄՆ դոլար վարկ, որով գնել եք ԱՄՆ մեկնելու ինքնաթիռի տոմսեր և պատրաստվել մեկնել ԱՄՆ, սակայն 2015թ. դեկտեմբերի 23-ին նույն վարչության ՀԿԳ ավագ քննիչ Բագրատ Ադամյանը Ձեզ որպես վկա հրավիրել է հարցաքննության: Երբ փաստաբան Հրանտ Ավետյանի հետ ներկայացել եք, հայտնել է, որ ներգրավվել եք որպես մեղադրյալ և որպես խափանման միջոց կալանավորում չընտրելու համար պահանջել ու նույն պահին Ձեզնից վերցրել է

20.000 ԱՄՆ դոլար, ինչից հետո նույն օրը, առանց որևէ հիմքի, ապօրինի մեղադրանք է առաջադրել:

Ձեր կողմից ներկայացված հաղորդման կապակցությամբ հրաժարվել եք բացատրություն տալուց:

Վերոգրյալի մասին «Hetq.am» կայքին Ձեր կողմից հայտնած և Ձեր հաղորդմամբ ներկայացված հանգամանքների պարզման համար բացատրություններ են վերցվել ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Բագրատ Ադամյանից, նույն վարչության պետի տեղակալ Ամբակում Գրիգորյանից, փաստաբան Հրանտ Ավետյանից, ուսումնասիրվել են ՀՀ ՔԿ-ից ստացված նյութերը, Ձեր կողմից նշված հանգամանքները չեն հաստատվել և բացի Ձեր հայտնած տեղեկություններից, այլ տեղեկություններ ձեռք չեն բերվել:

Նախապատրաստված նյութերով 2017թ. օգոստոսի 26-ին որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Ինչ վերաբերում է Ձեր դիմումում ՊՆ տենդերներին Ա. Վարսանյանի մասնակցության կամ թիվ 83159711 քրեական գործով մեղադրյալ Վ.Մանգասարյանի գործողություններին, ապա հայտնում եմ, որ Ա.Վարսանյանի առնչությամբ Ձեզ նախկինում տրվել են գրավոր պարզաբանումներ, իսկ Վ.Մանգասարյանի արարքները գնահատման են արժանացել նրա վերաբերյալ քննված և մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործով:

Հատկապես կարևոր գործերով քննության
վարչության դատախազ, արդարադատության
երրորդ դասի խորհրդական՝ *Վ.Դոլմազյան*